ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 123-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԵՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 21-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել՝

1) Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի գործունեության ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի գործունեության ծրագրի առաջին բաժնով նախատեսված ծրագրային կետերի ընտրության հիմնավորումը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումները հաշվեքննության իրականացման ժամկետում ներկայացնում են օրենքով սահմանված հաշվեքննության առաջադրանքի նախագիծ:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված 1
Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի
նոյեմբերի 29-ի թիվ 123-Լ որոշման

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

1-ԻՆ ԲԱԺԻՆ

- ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

N	Հաշվեքննության օբյեկտ	Հաշվեքննության առարկա	Պատասխանատու ստորաբաժանում	Հաշվեքննության իրականացման ժամկետ[1]
1.	2025 թվականի պետական բյուջեով սահմանված ծրագրերի միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմիններ	Պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչություն	2025-2026թթ.

- ԹԵՄԱՏԻԿ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	Հաշվեքննության օբյեկտ	Հաշվեքննության առարկա	Հաշվեքննության տեսակ	Պատասխանատու ստորաբաժանում	Հաշվեքննության իրականացման ժամկետ
2.	ՀՀ առողջապահության նախարարություն	Բժշկական կադրային ներուժի տարածքային անհամաչափ բաշխվածություն	Կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննության վարչություն	2025թ.
3.	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Պետության կողմից ձևավորվող մասնագիտական կրթության առաջարկի համապատասխանություն աշխատաշուկայի ներկա և կանխատեսվող պահանջարկին	Կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննության վարչություն	2025թ.
4.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ներքին գործերի նախարարություն	Երթևեկության անվտանգություն	Կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննության վարչություն	2025թ.
5.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Հողերի կոնսոլիդացումը	Կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննության վարչություն	2025թ.
6.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Սուբսիդիաների տրամադրման համակարգի կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննության վարչություն	2025թ.
7.	Երևանի քաղաքապետարան	«Խելացի քաղաք» ռազմավարական ծրագրի	Կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննության	2025թ.

[1] ՀՊՕ հոդված 24, մաս 3՝ «Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունն Ազգային ժողով է ներկայացնում Կառավարության կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունն Ազգային ժողով ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:»

		կատարման կատարողականի հաշվեքննություն		վարչություն	
8.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Տնտեսական դիվանագիտու-թյան կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննություն	Կատարողականի հաշվեքննության վարչություն	2025թ.
9.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումներ /2019-2023թթ./	Համապատասխանության հաշվեքննություն	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչություն	2025թ.
10.	ՀՀ առողջապահության նախարարություն	Դեղերի արտադրության և դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման գործընթաց	Համապատասխանության հաշվեքննություն	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչություն	2025թ.
11.	Աշտարակի համայնքապետարան	Ֆինանսատնտեսական գործունեության	ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչություն	2025թ.

2-ՐԴ ԲԱԺԻՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ԵՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N	Միջոցառման անվանում	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման Ժամկետ
1.	Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մարմիններում բյուջետային միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, գույքի և այլ ակտիվների օգտագործման վերաբերյալ համատեղ հսկողական (աուդիտի) միջոցառումներ:	-	2025թ.
2.	ԵԱՏՄ անդամ պետության բյուջեի կատարման դրամարկղային սպասարկում իրականացնող լիազոր մարմիններում ներմուծման մաքսատուրքերի /համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների/ գումարների հաշվեգրման և բաշխման, դրանք, որպես եկամուտ, բյուջեներ փոխանցման վերաբերյալ համատեղ հսկողական միջոցառումներ:	-	2025թ.

3-ՐԴ ԲԱԺԻՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N	Միջոցառման անվանում	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման Ժամկետ
1.	Հաշվեքննիչ պալատի 2024-2025 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի և դրա իրականացման միջոցառումների պլանին համաձայն՝ 2025 թվականին նախատեսված միջոցառումների իրականացում:	-	2025թ.

Հավելված N 2
Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի
նոյեմբերի 29-ի թիվ 123-Լ որոշման

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԵՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հիմնավորումը կազմվել է Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 91-Լ որոշմամբ հաստատված՝ «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագիրը կազմելու կարգը»-ի և Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի նոյեմբերի 22-ի N 16/4 որոշմամբ հաստատված՝ «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության» համաձայն և նպատակ ունի հիմնավորել Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի գործունեության ծրագրի առաջին բաժնով նախատեսված ծրագրային կետերի ընտրությունը:

2. 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ 1-ԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 91-Լ որոշմամբ հաստատված՝ «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագիրը կազմելու կարգը»-ի 26-րդ մասի 1-ին կետի համաձայն պետական բյուջեի ֆինանսական հաշվեքննության առարկան պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է, որի շրջանակում հաշվեքննության են ենթարկվում պետական բյուջեով նախատեսված ծրագրերը:

3. 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ 1-ԻՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 91-Լ որոշմամբ հաստատված՝ «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագիրը կազմելու կարգը»-ի համաձայն ստացված Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրային կետերի և հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթության առաջարկի հիմնավորումների հիման վրա, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 16/4 որոշմամբ հաստատված «Գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության» (այսուհետև՝

Մեթոդաբանություն) համաձայն՝ համապատասխանության թեմատիկ հաշվեքննությունների համար սահմանվել են հետևյալ թեմաները՝

1. **Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումներ (2019-2023թթ.)**
   (Առաջնահերթություն 6, Ուղղություն 6.17)

«Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023թթ. Ռազմավարությունը» փաստաթուղթը հիմնված է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի վրա և 2023 թվականի ավարտված լինելու հանգամանքը թույլ է տալիս արձանագրել, որ Ռազմավարությունով նախատեսված բոլոր արդյունքներն արձանագրված են, ուստի Հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթությունների ուղղության՝ Հաշվեքննիչ պալատի ծրագրի առանձին թեմա սահմանելը հնարավորություն կընձեռի ձևավորել ռազմավարական փաստաթղթով սահմանված միջոցառումների կատարման վերաբերյալ կարծիք, որն ինչպես մյուս դեպքերում, կարող է օգտագործվել՝ Կառավարության ծրագրում հայտարարված մտադրությունների լիարժեք իրագործման ուղղությամբ հետագա անելիքները ճշգրտելու նպատակով:

2. **Դեղերի արտադրության և դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման գործընթաց**
   (Առաջնահերթություն 1, Ուղղություն 1.9)

Դեղագործությունը ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով սահմանվել է որպես արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտներից մեկը:

ՀՀ տնտեսության մեջ ներկայումս մեծ կարևորություն է տրվում դեղագործության ոլորտի զարգացմանը: Ոլորտն ունի ռազմավարական կարևոր նշանակություն, քանի որ այն ուղղակիորեն կապված է բնակչության առողջության պահպանման և պետական անվտանգության ապահովման հետ: Ոլորտի հիմնախնդիր է շարունակում մնալ պետական գրանցամատյանում չգրանցված դեղերի շրջանառությունը[2]:

4. 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ 1-ԻՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[2] Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում 3236 անուն դեղ կա, Վրաստանում՝ գրանցված դեղերի թիվը շուրջ 8 հազ. է, Ռուսաստանի Դաշնությունում նախորդ տարեվերջին գրանցված դեղերի թիվը 18.5 հազ. է:

Մեթոդաբանության[3] համաձայն՝ համայնքի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացվում է միմյանց չկրկնող առնվազն մեկ ֆինանսական և /կամ/ համապատասխանության հաշվեքննություն:

Ծրագրի կազմման համար 2023թ. տարեկան փաստացի ծախսերի ուսումնասիրության արդյունքում (2024թ. անհրաժեշտ ելակետային տվյալները դեռևս հասանելի չեն համակարգում) առաջնահերթ չափանիշներով գնահատելու արդյունքում՝ առաջնահերթությունը տրվել է առնվազն երեք չափանիշով ամենամեծ ցուցանիշ ունեցող Աշտարակի համայնքապետարանին:

5. 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ 1-ԻՆ ԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԹԵՄԱՏԻԿ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ[4]

Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 91-Լ որոշմամբ հաստատված՝ «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագիրը կազմելու կարգը»-ի համաձայն ստացված Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրային կետերի և հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթության առաջարկի հիմնավորումների և Մեթոդաբանության հիման վրա՝ կատարողականի թեմատիկ հաշվեքննությունների համար ծրագրային կետերի ընտրության մեթոդական հիմքերն են՝

Հաշվեքննիչ պալատի միջնաժամկետ (2025-2027թթ.) առաջնահերթություններ

1. Մարդուն մատչելի, հասանելի, որակյալ և դիմակայուն առողջապահություն.
2. Մարդուն մատչելի և որակյալ ցկյանս կրթություն.
3. Մարդուն շրջապատող մաքուր և անվտանգ միջավայր.
4. Մարդուն մատչելի և արդյունավետ արդարադատություն.
5. Արտահանմանը միտված, գիտահեն և մրցակցային տնտեսության զարգացում.
6. Պետական ֆինանսների և սեփականության կառավարման ինստիտուտների ամրապնդում.
7. Ներդաշնակ զարգացող համայնքներ:

Չափանիշների համառոտ ցանկ

A. նախորդ տարվանից տեղափոխված ծրագրային կետ,
B. նախկինում հաշվեքննության չեն ենթարկվել,
C. ունենան առավել ազդեցության ներուժ,
D. տեղեկատվության հասանելիության բավարար մակարդակ,
E. առկա է խոշոր բյուջետային ֆինանսավորում,

---

[3] Մեթոդաբանությամբ (15-րդ կետ) ընտրված ծրագրային կետ

[4] *Մեթոդաբանությամբ (19-րդ, 20-րդ կետեր) ընտրված ծրագրային կետեր*

F. առկա է բյուջեի ֆինանսական և ոչ ֆինանսական բարձր կատարողական,
G. շահառուների կողմից առկա է հաշվեքննություն իրականացնելու պահանջ:

Ոլորտների ցանկ

1) պաշտպանություն
2) կրթություն, գիտություն
3) շրջակա միջավայր (բնապահպանություն)
4) առողջապահություն
5) ենթակառուցվածքներ
6) ազգային տնտեսական զարգացում
7) պետական (համայնքային) եկամուտների հավաքագրում
8) հանրային հատվածի նշանակալի ծրագրեր
9) հանրային ֆինանսներ և հանրային կառավարում
10) սոցիալական ապահովություն և աշխատանքի ռեսուրսներ
11) հասարակական կարգի պահպանություն:

2025 թվականի համար ծրագրված կատարողականի հաշվեքննության 7 նոր ծրագրային կետերը (Հաշվեքննության յուրաքանչյուր առաջնահերթության շրջանակներում մեկական) ներկայացված են ստորև.

1. Բժշկական կադրային ներուժի տարածքային անհամաչափ բաշխվածություն *(Առաջնահերթություն 1, Ուղղություն 1.12)*

Կարևոր նշանակություն ունի բժշկական կադրային ներուժի խիստ անհամաչափ բաշխվածությունը (10000 բնակչի հաշվով ՏՀԶԿ երկրներում բժիշկների թիվը 37 է[5], ՀՀ-ում՝ 51, ընդ որում՝ մայրաքաղաքում՝ 101, իսկ մարզերում 16-26) և մարզերում կադրային թերհագեցվածությունը (Առողջապահության նախարարության տվյալներով[6] մարզերում առկա է 287 բուժաշխատողի թափուր հաստիք)[7]:

2. Պետության կողմից ձևավորվող մասնագիտական կրթության առաջարկի համապատասխանություն աշխատաշուկայի ներկա և կանխատեսվող պահանջարկին

(Առաջնահերթություն 2, Ուղղություն 2.5)

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մեջ ցածր ընդգրկվածության պայմաններում, աշխատաշուկայի վերլուծությունները ցույց են տալիս, որ իրական աշխատաշուկայի 70%-ից ավելին ունի արհեստագործական և

[5] Health at a Glance 2023, OECD, 2023, p. 176.
[6] 2024թ. մայիսի դրությամբ, https://www.moh.am/#1/119:
[7] Վերջին 5 տարիներին (2018-2022թթ.) ԵՊԲՀ-ն ավարտող բժիշկ շրջանավարտների միջին տարեկան թիվը 677 է (Աղբյուր՝ «Առողջություն և առողջապահություն» վիճակագրական տարեգիրք 2023, ԱՆ ԱԱԻ, 2024, էջ 258):

միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների կարիք, իսկ արհեստագործական կրթություն պահանջող շատ աշխատանքներում զբաղված են բարձրագույն կրթությամբ անձինք:

3. Երթևեկության անվտանգություն

(Առաջնահերթություն 3, Ուղղություն 3.10)

ՀՀ-ում ճանապարհատրանսպորտային պատահար*ներից (ՃՏՊ) մահերի թիվը 2017-2022թթ. աճել է 35.5%-ով*[8] *(2022թ.՝ 378 զոհ, 2021թ՝ 321 զոհ): ՃՏՊ-ների արդյունքում 2022թ. 6153 անձ վիրավորվել է: Այս համատեքստում կարևորվում է երթևեկության անվտանգության ողջ համալիրի գնահատումը, այդ թվում՝ ճանապարհների կահավորման, ավտոմեքենաների տեխնիկական զննման ոլորտի պետական կարգավորման արդյունավետության, ճանապարհապարեկային ծառայության գործունեության մասով:*

4. Հողերի կոնսոլիդացումը

(Առաջնահերթություն 5, Ուղղություն 5.1)

Ոլորտի նշանակալի հիմնախնդիրը շարունակում է մնալ գյուղացիական տնտեսությունների *փոքր չափերը* (շուրջ 346 հազ. տնտեսություններից յուրաքանչյուրին միջինում բաժին է ընկնում 1.48 հա հողատարածք՝ ըստ մարզերի տատանվելով՝ Արարատի մարզում՝ 0.72 հա-ից մինչև Շիրակի մարզում՝ 2.54 հա-ի միջակայքում[9]) և *հողերի մասնատվածությունը* (գյուղացիական տնտեսությունների 45%-ը կազմված է 3 և ավելի, իսկ 20%-ը՝ 5 և ավելի հողամասերից), որի պայմաններում ցածր է աշխատանքի արտադրողականությունն ու գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակը (2023թ. կազմել է 57.2%[10]): Նախատեսվում է հողերի չօգտագործման մակարդակը նվազեցնել տարեկան 1000 հա-ով:

5. Տնտեսական դիվանագիտություն

(Առաջնահերթություն 5, Ուղղություն 5.7)

Տվյալ ծրագրային կետի էականությունը պայմանավորված է տնտեսական դիվանագիտության՝ արտահանման խթանման վրա ազդեցության նշանակալի ներուժով: ՀՀ 2024-2026թթ. Միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվում է դեսպանընկալ երկրի հետ տարեկան առևտրաշրջանառությունն ավելացնել 30-35%-ով: Այնուամենայնիվ, 2022թ. ՀՀ առևտրային ներկայացուցչությունների նպատակների և խնդիրների իրագործման բյուջետային միջոցառման կատարողականը կազմել է 17.9%,

---

[8] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ., 2021թ., 2022թ. հունվար-դեկտեմբերին, ՎԿ:
[9] ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները, ՎԿ:
[10] Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2023 թվականին, ՎԿ:

ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործել են ՀՀ 2 առևտրային ներկայացուցչություններ՝ նախատեսված 5-ի փոխարեն: Նախատեսվող հաշվեքննության շրջանակներում գնահատվելու է տնտեսական դիվանագիտության զարգացմանն ուղղված պետության միջոցառումների արդյունավետությունը:

6. Սուբսիդիաների տրամադրման համակարգ

(Առաջնահերթություն 6, Ուղղություն 6.6)

Սուբսիդավորումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կազմակերպություններին ֆինանսական միջոցների տրամադրման հիմնական գործիքներից մեկն է, որի կիրառությամբ 2024-2026թթ. միջնաժամկետ հորիզոնում նախատեսվում է ծախսել ընդհանուր առմամբ շուրջ կես տրիլիոն դրամի չափով բյուջետային միջոցներ: Սուբսիդիաների տրամադրման համակարգի գնահատումը և միջազգային լավագույն փորձի տեսանկյունից դրա զարգացմանը միտված առաջարկությունները պարունակում են բյուջետային առանձին ծրագրերի շրջանակներում իրականացվող սուբսիդավորման ծախսերի արդյունավետության բարձրացման զգալի ներուժ:

7. «Խելացի քաղաք» ռազմավարական ծրագրի կատարում (ք. Երևանում)

(Առաջնահերթություն 7, Ուղղություն 7.4)

Տվյալ ծրագրային կետի էականությունը պայմանավորված է թվային փոխակերպումների՝ Հանրապետության խոշորագույն համայնքում կառավարման արդյունավետության բարձրացման վրա ազդեցության մեծ ներուժով: Այն հանդիսանում է Երևան քաղաքի զարգացման 2023 թվականի ծրագրի հիմնական ուղղություններից մեկը: Ծրագրի կատարողականի գնահատումը, ինչպես նաև առկա հիմնախնդիրների (այդ թվում՝ կիբեռանվտանգություն, մարդկային ռեսուրսների սղություն) հասցեագրումը պարունակում է բարելավման նշանակալի ներուժ: